



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱԿՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ  
 MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA  
 HEAD OF STAFF  
 МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
 РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0090, ք. Երևան, Հանրապետական Թ. Կառավարության Զրոյ օրո՛ւ  
 0090, Republic of Armenia, Yerevan, 0090, Armenia  
 0090, Армения, - Ереван, Дом правительства, здание N3  
 էլ. փոստ (E-mail) an.povta\_e\_jr@minnat.am  
 Web page: www.mnp.am  
 Թ: (374 10) 58 54 19  
 Գ: 7874 100 54 08 17

№ 5/12.1/54231

<< 13 >> 05 2014 թ.

Հայաստանի <<Օրիոս>> կենտրոնների հասարակայնության  
 հետ կապերի պատասխանատու  
 տիկին Մ. Չաքրյանին

Հարգելի տիկին Չաքրյան

Ի պատասխան Ձեր 2014թ. ապրիլի 29-ի գրության, հայտնում եմ, որ  
 <<Շնչերությունների կողմից վճարվող քնապահպանական վճարների նպատակային  
 օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով  
 փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի  
 /այսուհետ՝ նախագիծ/ լրամշակված տարբերակը 13.01.2014թ. ներկայացվել է ՀՀ  
 կառավարության աշխատակազմ քննարկման: Համաձայն ՀՀ վարչապետի  
 13.02.2014թ. հանձնարարականի նախագիծը կրկին քննարկվել է ՀՀ ֆինանսների  
 նախարարության հետ: ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը /կցվում է/  
 համաձայն ՀՀ վարչապետի 25.03.2014թ. 02/24.6/4193-14 հանձնարարականի  
 քննարկվել է ի գիտություն:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքով՝



Է. Փիրոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Երևան, Կառավարական տուն 1

---

ՀՀ բնապահպանության նախարար  
պարոն Արամ Հարությունյանին

---

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ ի գիտություն:



Վաչե Գաբրիելյան

.....ը....., 2014.....թ. h/h.....

կատարող՝ Արաքսյա Մարգարյան 51.58.36



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մոլիբ-Ադամյան փող. 1  
Էլ. փոստ՝ minister@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 304, ֆաքս՝ (+374 60) 700 358  
Վեբ կայք՝ www.minfin.am

№

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական  
նախարարական կոմիտեի 13.02.2014թ. նիստի արձանագրության  
1-ին կետով տրված հանձնարարականի (19.02.2014թ. N 24.13/[186377]-14)  
կապակցությամբ

Հարգելի պարոն Հարությունյան

ՀՀ ֆինանսների նախարարությունը ի կատարումն վերը նշված հանձնարարականի, հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի ս.թ. փետրվարի 13-ի նիստին ներկայացված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) դրույթները, կատարել է ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերի կանխատեսումները և այդ կապակցությամբ հայտնում է հետևյալը.

1. Նախագծի 4-րդ հոդվածի դրույթի համաձայն օրենքն ուժի մեջ պետք է մտնի վերջինիս պաշտոնական հրապարակման տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից: Այսինքն, եթե այն ընդունվի և հրապարակվի 2014 թվականի ընթացքում, ապա վերջինիս գործողությունը կտարածվի պետական բյուջեի նախագծերի մշակման գործընթացի վրա սկսած 2015 թվականից (այսինքն, Նախագծի դրույթները առաջին անգամ կկիրառվեն ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման ժամանակ):

2. Ընկերությունների կազմը և մասհանվող վճարների տեսակները սահմանող գործող օրենքի դրույթների կիրառման դեպքում այդ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական և բնօգտագործման վճարների 2011-2013թթ փաստացի մուտքերի հանրագումարը (որն ըստ օրենքի պետք է կիրառվի 2015 թվականի բնապահպանական սուրվենցիաների չափերի հաշվարկներում) կազմել են՝ 870.1 մլն դրամ: Հաշվի առնելով Նախագծի դրույթները՝ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական և բնօգտագործման վճարների փաստացի մուտքերը կկազմեն 1,651.1 մլն դրամ կամ գործող օրենքի դիմաց 781.0 մլն դրամով ավելի: Գործող օրենքի դրույթները կիրառելով 2015 թվականի բնապահպանական սուրվենցիաների խիստ նախնական ծավալը կկազմի 308.4 մլն դրամ:

3. Գործող օրենքի դրույթները կիրառելով և հաշվարկների պարզության համար 2016-2017թթ բնապահպանական սուրվենցիաների որոշման համար 2012-2014թթ (2016 թվականին նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների) և 2013-2015թթ (2017 թվականին նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների) մուտքերը 2011-2013թթ մուտքերի չափով ընդունելով, 2016 և 2017 թվականների բնապահպանական սուրվենցիաների խիստ նախնական ծավալները կկազմեն համապատասխանաբար 312.9 մլն դրամ և 248.8 մլն դրամ:

4. Նախագծի դրույթները կիրառելու դեպքում և հաշվարկների պարզության համար 2016 և 2017 թվականների բնապահպանական սուրվենցիաների կանխատեսվող ծավալի որոշման համար 2012-2014թթ և 2013-2015թթ մուտքերը 2011-2013թթ մուտքերի չափով ընդունելով, 2016 և 2017 թվականների բնապահպանական սուրվենցիաների խիստ նախնական ծավալները կկազմեն համապատասխանաբար 1,090.2 մլն դրամ և 252.5 մլն դրամ կամ գործող օրենքի դիմաց համապատասխանաբար 777.3 մլն դրամով և 3.7 մլն դրամով ավելի:

Ելնելով վերոհիշյալից, ինչպես նաև նկատի ունենալով Նախագծի նկատմամբ նախկինում արդեն իսկ արված դիտողությունները, ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը Նախագծի նկատմամբ (կցվում է) մնում է անփոփոխ:

Հարգանքով՝



ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը

Տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի ս.թ. փետրվարի 13-ի նիստի օրակարգում ընդգրկված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի նկատմամբ

(Օրակարգի հարց N 1)

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունը իր իրավասությունների շրջանակում հայտնում է հետևյալը.

1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է ընդլայնել այն ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) ցանկը, որոնց գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն համայնքների տարածքներում և դրանով պայմանավորված, որոնց կողմից պետական բյուջե մուծվող բնապահպանական և, ըստ Նախագծի, նաև բնօգտագործման վճարներից պետք է օրենքով սահմանված կարգով մասհանումներ կատարվեն այդ համայնքների բյուջեներ: Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության վերը նշված ցանկը կազմվել է՝ հիմք ընդունելով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների մասով համապատասխան մարզպետարանների առաջարկությունները և հիմնավորումները, ինչպես նաև ՀՀ բնապահպանության նախարարության կողմից որպես Ընկերությունների ընտրության չափանիշ առաջարկված՝ Ընկերությունների կողմից բնապահպանական և բնօգտագործման փաստացի վճարներից Նախագծով առաջարկվող մասհանումների ծավալի տարեկան կտրվածքով առնվազն 0,5 մլն դրամը սահմանելը, ինչը, սակայն, որևէ կերպ հիմնավորված չէ:

2. Նախագծով նախատեսվում է ներկայումս գործող կարգի համեմատ լրացուցիչ մասհանումներ կատարել համայնքների բյուջեներ.

ա) Ընկերություններին պատկանող՝ ՀՀ-ում հաշվառված և շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար սահմանված բնապահպանական վճարներից՝ 100 տոկոսի չափով,

բ) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության համար սահմանված բնապահպանական վճարներից՝ 50 տոկոսի չափով,

գ) արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար ռոյալթիից և պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների, մարված պաշարների համար վճարվող բնօգտագործման վճարներից՝ 1 տոկոսի չափով:

Առաջարկվող մոտեցմամբ վերը նշված բնապահպանական և բնօգտագործման վճարներից համայնքների բյուջեներին մասհանում կատարելը, ինչպես նաև 100, 50 և 1 տոկոս մասհանման առաջարկվող չափերը նույնպես որևէ կերպ հիմնավորված չեն և դրանց ընդունումը գտնում ենք ոչ նպատակահարմար, քանի որ Նախագծում նշվող.

ա) բնապահպանական վճարներին առնչվող քննարկվող վնասակար ազդեցությունները հստակ աշխարհագրական ընդգրկում չունեն և հնարավոր չէ գնահատել/որոշել վնասակար ազդեցության ենթարկվող համայնքները և ազդեցության չափը: Ընդ որում, այս հարցի կարգավորումը Նախագծով վերապահվում է ՀՀ կառավարությանը, առանց որևէ մեխանիզմի (հիմնավորման մեջ) առաջարկության:

բ) արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար ռոյալթիի և պինդ օգտակար հանածոների (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների) մարված պաշարների համար վճարվող բնօգտագործման վճարների դեպքում հարկ է նկատի ունենալ, որ «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճար, իսկ 69-րդ հոդվածի համաձայն օգտակար հանածո արդյունահանողների կողմից սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվում է բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ, սահմանվում են դրա օգտագործման ուղղությունները բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման, ինչպես նաև շրջակա միջավայրին հասցված և արդյունահանողի կողմից չհատուցված վնասների վերականգնման նպատակով: Հարկ է նշել, նաև որ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն բնօգտագործման վճարը գանձվում է պե-

տական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման և (կամ) իրացման համար, իսկ բնապահպանական վճարը՝ բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով: Ուստի Ընկերությունների գործունեության արդյունքում համայնքների տարածքներում վնասակար ազդեցությունը քննարկելիս հարկ է դիտարկել միայն բնապահպանական վճարները: Նախագծին կից ներկայացված ամփոփաթերթում որպես բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման համար համայնքների բյուջեներ մասհանում կատարելու աղբյուր բնօգտագործման վճարները նախատեսելու հիմնավորում ՀՀ բնապահպանության նախարարությունը նշել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթը, համաձայն որի բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ վերոհիշյալ օրենքով սահմանվում է բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերի ծավալի նվազագույն չափը, այլ ոչ թե բնօգտագործման վճարի ծախսման ուղղությունները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծին կից ներկայացված տեղեկանքի համաձայն Նախագծի ընդունումը կավելացնի ՀՀ պետական բյուջեի ծախսերը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Նախագծով նախատեսված բնապահպանական և բնօգտագործման վճարների ընդգրկումը մասհանվող գումարների կազմում գտնում ենք ոչ նպատակահարմար և առաջարկում ենք Նախագծից հանել 1-ին և 3-րդ հոդվածները, 2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերը: